ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին»
(*Մատթ., Զ 21*)

Հայոց Գրերի 1600-ամեակի պանծալի յոբելեանի առջև, երբ մեր հայեացքները ուղղուած են դէպի բազմադարեայ գրաւոր մեր արժէքները, Հայրապետական Մեր այս կոնդակով, գոհունակութեամբ տեղեկացնում ենք, որ արդէն երեք տարի է, ինչ հաստատուել է «Մատենադարանի Բարեկամներ» բարեգործական հիմնադրամը՝ կոչուած ծառայելու Երևանի Մատենադարանում պահուող տասնեակ հազարաւոր ձեռագրերի, վաւերագրերի ու հնատիպ գրականութեան բարւոք պահպանմանն ու հարստացմանը, ուսումնասիրմանն ու հրապարակմանը, կոչուած նաև նպաստելու հայագիտութեան և ձեռագրագիտութեան ասպարէզներում երիտասարդ նոր սերնդի կրթութեանը:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց Վարդապետի անունը կրող Մատենադարանը ազգային մեր նուիրական հաստատութիւններից է, գանձարան մեր նախնիներից աւանդուած բազմադարեայ ժառանգութեան: Արդարև, անհնար է ճանաչել հայ ժողովրդին առանց ձեռագիր մատեանների, ծաղկած յիշատակարանների և վաղ տպագրութիւնների, որոնցում իր ամենապայծառ արտայայտութիւնն է գտել հայութեան հոգին: Գիրքը մեր հաւատի անբաժան մասն է, անբաժան մասն է առ Հայրենին մեր նուիրումի ու սիրոյ, ճանաչողութեան ու արարումի ոգու, որը Աւետարանի լոյսով բացուեց ու փթթեց ու պտուղներ տուեց անմահ:

Մեր հայրերը Ոսկեդէնիկ հինգերորդ դարից ի վեր գրեցին ու թարգմանեցին այն ուրախութեամբ ու խանդավառութեամբ, որով դիմաւորեցին Մաշտոցին, երբ վերադառնում էր Աստուծոյ Կամքով բերելով հանճարածնունդ ու հանճարագործ 36 տառերը հայերենի: Գրեցին, որ յայտնի լինի «երանելի մարդկանց ազնուութիւնը, ճշմարիտ հաւատքի հաստատութիւնը, աստուածամերձ, աստուածամոտ կեանքի վայելչութիւնը, սքանչելի կեանքի պայծառութիւնը»: Ինչ որ գրեցին, գրեցին աղօթքով, գրեցին հակառակ աւերի ու թալանի, հակառակ խաւարի: Դարեր-դարեր անխոնջ գրեցին, մատեաններ ու յիշատակարաններ ծաղկեցին, ու գիրքը դարձաւ սրբութիւն, լոյս ու ճանապարհ:

Յիրաւի, պատմութեան մէջ եզակի երևոյթներից է այն իրողութիւնը, որ ազգային պետականութիւնը կորցրած, օտարի ամենածանր տիրապետութեան ներքոյ գտնուող հալածական ժողովուրդը ձեռագրեր էր ստեղծում, գրքեր տպագրում: Գրում և տպագրում էին դժուարութիւններ յաղթահարելով, զոհողութիւնների գնով, տարագրութեան մէջ, բայց՝ անձանձիր, հաւատալով հայախօս ու աղօթաշունչ այդ գրքերի լուսաբեր, ազգապահպան ու ազգաշէն առաքելութեանը, հաւատալով լուսաւորութեան ուժին, մարդկութեան առաջագնաց, խաղաղ գալիքին: Այս հաւատով փորձութիւնների, աւերների ու կոտորածների ժամանակ նախնառաջ գրքերը փրկեցին, պահպանեցին գաղթի ճանապարհներին, օտարութեան մէջ, պահպանեցին ինչպէս սուրբ նշխար:

digitised by A.R.A.R.@

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ-ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Այսպիսին է Մատենադարանում հաւաքուած մեր գրաւոր ժառանգութիւնը, որն իր պատմական, մշակութային ու իմացական և իր հոգևոր արժէքով միայն մերը չէ, այլև համայն մարդկութեանը: Մատենադարանը պիտի պահպանենք իբրև հոգու սրբազան տաճար, գիտութեան ու արուեստի լուսեղէն կաճառ՝ միշտ մնալով շարունակողները մեր նախնիների իմաստասէր վարքի: «Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին»,- ասում է Քրիստոս՝ մեր Փրկիչն ու Տէրը: Մեր գանձերը կշարունակեն ապրել, կշարունակեն իրենց առաքելութիւնը, քանի դեռ մենք նրանց հնաբոյր, բազմախօս էջերում կփնտրենք մեր հոգին ու էութիւնը, մնալով նաև շարունակողները մեր նախնիների նուիրումի ու նախանձախնդրութեան, որով վանքերում՝ գրչութեան կենտրոններում գրքեր հաւաքեցին և ընդօրինակեցին ու մատենադարաններ կազմեցին:

Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի և Սուրբ Մեսրոպ Մաշտոց մեր մեծ Ուսուցիչների խնամքով ծնունդ առնելով՝ տասնհինգ հարիւրամեակ Մայր Աթոռի հովանու ներքոյ պահպանուեց ու հարստացուեց Սուրբ էջմիածնի Մատենադարանը: Այդ հարուստ ու անգնահատելի հաւաքածուի ժառանգորդն է այսօր Երևանի Մատենադարանը՝ աւելի քան կէս դար գործելով իբրև պետական գիտական հաստատութիւն և շարունակելով լինել մեր ժողովրդի հպարտութեան ու հոգածութեան առարկան:

Մատենադարանը, սիրելիներ, պիտի շարունակի մնալ համազգային մեր սիրոյ և ուշադրութեան կենտրոնում, որպէսզի մեր անգնահատելի արժէքները ամբողջութեամբ ու լիարժէքօրէն ուսումնասիրուեն, մատուցուեն ու ճանաչելի դառնան մեզ և միւս ժողովուրդներին, շարունակելով լոյս սփռել՝ իմացութեան, հաւատի, սիրոյ ու նուիրումի: Գանձեր ունենք Մատենադարանում ամբարուած, ուրեմն, թող այնտեղ լինեն նաև մեր սրտերը:

Ողջունելով Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց Երանելիներին, մեր մատենագրութեան բոլոր անխոնջ մշակներին՝ գրիչներին, ծաղկողներին, կազմողներին, ստացողներին, օրհնաբանելով ձեռագրեր փրկագնողներին ու բարերարներին, յորդորում ենք բոլորիդ, հաւատացեալ ու սիրեցեալ Մեր ժողովուրդ. հայ դպրութեան, մշակոյթի, մատենագրութեան և պատմութեան նկատմամբ խորը ակնածանքի և խոնարհումի զգացումով մասնակցէք Մատենադարանի գործունէութեանն ու ծրագրերին ձեր ընծայաբերումներով, սատարէք ու զօրակցէք նրա առաքելութեանը: Հաւատարիմ ու հոգացող սրտերով պահպանենք ու փոխանցենք մեր գանձերը սերունդներին, որպէսզի անցեալի ու ներկայի յարատև շաղկապումով լուսաշող ծնունդ առնի մեր վաղուայ օրը, ու պայծառ փայլի հայոց ապագան, որպէսզի սերունդների շուրթերին շարունակի հպարտօրէն հնչել. «Զի թէպէտ և ենք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, ... սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի»:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենջ, ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 3-ն Սեպտեմբերի
Յամի Տեառն 2004 և ի թուին Հայոց ՈՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ էջմիածնի
ընդ համարաւ 254

digitised by A.R.A.R.@